Ընդունված է 2013 թվականի դեկտեմբերի 12-ին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Ընդունել ի գիտություն, որ՝

1) Հայաստանի Հանրապետության 2014 թվականի համախմբված բյուջեն կկազմի՝

ա. եկամուտների գծով՝ 1,170.4 մլրդ դրամ (առանց միջբյուջետային փոխանցումներից ստացվող մուտքերի),

բ. ծախսերի գծով՝ 1,286.0 մլրդ դրամ (առանց միջբյուջետային փոխանցումների),

գ. դեֆիցիտը (պակասուրդը)՝ 115.6 մլրդ դրամ.

2) Հայաստանի Հանրապետության համայնքների 2014 թվականի բյուջեները կկազմեն՝

ա. եկամուտների գծով՝ 114.2 մլրդ դրամ (ներառյալ՝ պետական բյուջեից ստացվող պաշտոնական դրամաշնորհները),

բ. ծախսերի գծով՝ 119.4 մլրդ դրամ,

գ. դեֆիցիտը (պակասուրդը)՝ 5.2 մլրդ դրամ:

Հոդված 2. Հաստատել Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեն՝

	Գումարը (հազար դրամներով)
1. Եկամուտների գծով	1,135,902,832.0
2. Ծախսերի գծով	1,246,437,412.0
3. Դեֆիցիտը (պակասուրդը)	110,534,580.0

Հոդված 3. Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորմանն ուղղել հետևյալ միջոցները՝

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԻ (ՊԱԿԱՍՈՒՐԴԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ	Գումարը (հազար դրամներով)
ԸՆԴԱՄԵՆԸ	**110,534,**580.0
այդ թվում՝	
Ա. Ներքին աղբյուրներ	87,367,478.1
Բ. Արտաքին աղբյուրներ	23,167,101.9

Հոդված 4. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին՝ 2014 թվականի ընթացքում, օրենքով վերապահված իրավասությունների սահմաններում դրամավարկային քաղաքականության վերաբերյալ որոշումներ ընդունելիս առաջնորդվել 12-ամսյա գնաճի 4.0 +/- 1.5 տոկոսային կետ տատանումների թույլատրելի միջակայքում նպատակային ցուցանիշով:

Հոդված 5. Հայաստանի Հանրապետության կառավարությանը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորումը 2014 թվականի բյուջետային տարվա ընթացքում իրականացնել բացառապես «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Հոդված 6. Հաստատել Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի եկամուտները, ըստ ձևավորման աղբյուրների դասակարգման առանձին խմբերի, հետևյալ չափերով՝

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ	Գումարը (հազար դրամներով)
ԸՆԴԱՄԵՆԸ	**1,135,902,832.0**
այդ թվում՝	
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,097,769,794.5
Պաշտոնական դրամաշնորհներ	19,991,746.3
Այլ եկամուտներ	18,141,291.2

Հոդված 7. Հաստատել Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեից հատկացումները, ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման, հետևյալ չափերով՝

Բաժին	Խումբ	Դաս		Գումարը (հազար դրամներով)
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**1,246,437,412.0**
			այդ թվում՝	
01			**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**	**218,316,442.3**
			այդ թվում՝	

Բաժին	Խումբ	Դաս		Գումարը (հազար դրամներով)
	01		Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ	86,980,138.3
		01	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում	17,910,570.7
		02	Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ	56,985,443.3
		03	Արտաքին հարաբերություններ	12,084,124.3
	03		Ընդհանուր բնույթի ծառայություններ	3,120,949.4
		01	Աշխատակազմի /կադրերի/ գծով ընդհանուր բնույթի ծառայություններ	599,461.8
		02	Ծրագրման և վիճակագրական ընդհանուր ծառայություններ	1,543,840.1
		03	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	977,647.5
	04		Ընդհանուր բնույթի հետազոտական աշխատանք	9,402,778.4
		01	Ընդհանուր բնույթի հետազոտական աշխատանք	9,402,778.4
	05		Ընդհանուր բնույթի հանրային ծառայու-թյունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	1,696,676.5
		01	Ընդհանուր բնույթի հանրային ծառայու-թյունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	1,696,676.5
	06		Ընդհանուր բնույթի հանրային ծառայու-թյուններ (այլ դասերին չպատկանող)	12,718,158.8
		01	Ընդհանուր բնույթի հանրային ծառայու-թյուններ (այլ դասերին չպատկանող)	12,718,158.8
	07		Պետական պարտքի գծով գործառնությունն-ներ	63,385,898.6
		01	Պետական պարտքի գծով գործառնությունն-ներ	63,385,898.6
	08		Կառավարության տարբեր մակարդակների միջև իրականացվող ընդհանուր բնույթի տրանսֆերտներ	41,011,842.3
		01	Կառավարության տարբեր մակարդակների միջև իրականացվող ընդհանուր բնույթի տրանսֆերտներ	41,011,842.3
02			**ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**	**194,085,891.8**
			այդ թվում՝	
	01		Ռազմական պաշտպանություն	187,176,438.3
		01	Ռազմական պաշտպանություն	187,176,438.3
	03		Արտաքին ռազմական օգնություն	156,661.9

Բաժին	Խումբ	Դաս		Գումարը (հազար դրամներով)
		01	Արտաքին ռազմական օգնություն	156,661.9
	04		Հետազոտական և նախագծային աշխատանքներ պաշտպանության ոլորտում	1,494,284.3
		01	Հետազոտական և նախագծային աշխատանքներ պաշտպանության ոլորտում	1,494,284.3
	05		Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	5,258,507.3
		01	Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	5,258,507.3
03			**ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ**	**82,474,188.1**
			այդ թվում՝	
	01		Հասարակական կարգ և անվտանգություն	52,476,229.0
		01	Ոստիկանություն	33,321,041.5
		02	Ազգային անվտանգություն	19,155,187.5
	02		Փրկարար ծառայություն	7,272,801.0
		01	Փրկարար ծառայություն	7,272,801.0
	03		Դատական գործունեություն և իրավական պաշտպանություն	9,952,033.2
		01	Դատարաններ	9,422,913.4
		02	Իրավական պաշտպանություն	529,119.8
	04		Դատախազություն	3,135,491.2
		01	Դատախազություն	3,135,491.2
	05		Կալանավայրեր	9,313,303.0
		01	Կալանավայրեր	9,313,303.0
	07		Նախաքննություն	324,330.7
		01	Նախաքննություն	324,330.7
04			**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**	**108,276,747.7**
			այդ թվում՝	
	01		Ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերություններ	3,318,244.1
		01	Ընդհանուր բնույթի տնտեսական և առևտրային հարաբերություններ	3,318,244.1
	02		Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն	23,774,834.2
		01	Գյուղատնտեսություն	12,054,648.0
		02	Անտառային տնտեսություն	1,026,395.8
		04	Ոռոգում	10,693,790.4
	03		Վառելիք և էներգետիկա	6,614,799.4
		03	Միջուկային վառելիք	226,277.3
		04	Վառելիքի այլ տեսակներ	482,259.4
		05	Էլեկտրաէներգիա	5,906,262.7

Բաժին	Խումբ	Դաս		Գումարը (հազար դրամներով)
	04		Լեռնաարդյունահանում, արդյունաբերություն և շինարարություն	6,145.4
		01	Հանքային ռեսուրսների արդյունահանում, բացառությամբ բնական վառելիքի	6,145.4
	05		Տրանսպորտ	71,535,964.4
		01	Ճանապարհային տրանսպորտ	62,935,269.4
		03	Երկաթուղային տրանսպորտ	575,462.1
		04	Օդային տրանսպորտ	306,543.1
		05	Խողովակաշարային և այլ տրանսպորտ	7,718,689.8
	06		Կապ	395,719.5
		01	Կապ	395,719.5
	07		Այլ բնագավառներ	75,000.0
		03	Զբոսաշրջություն	75,000.0
	08		Տնտեսական հարաբերությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	122,477.6
		01	Ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրա-յին և աշխատանքի հարցերի գծով հետա-զոտական և նախագծային աշխատանքներ	42,388.7
		04	Լեռնաարդյունահանման, արդյունաբերու-թյան և շինարարության գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	80,088.9
	09		Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	2,433,563.1
		01	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	2,433,563.1
05			**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**	**4,451,160.3**
			այդ թվում՝	
	01		Աղբահանում	48,324.9
		01	Աղբահանում	48,324.9
	03		Շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքար	149,861.8
		01	Օդի աղտոտման դեմ պայքար	149,861.8
	04		Կենսաբազմազանության և բնության պաշտպանություն	2,776,114.9
		01	Կենսաբազմազանության և բնության պաշտպանություն	2,776,114.9
	06		Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	1,476,858.7
		01	Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	1,476,858.7

Բաժին	Խումբ	Դաս		Գումարը (հազար դրամներով)
06			**ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**	**26,849,593.0**
			այդ թվում՝	
	03		Ջրամատակարարում	24,164,279.8
		01	Ջրամատակարարում	24,164,279.8
	04		Փողոցների լուսավորում	1,971,973.0
		01	Փողոցների լուսավորում	1,971,973.0
	06		Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	713,340.2
		01	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	713,340.2
07			**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ**	**80,728,761.5**
			այդ թվում՝	
	01		Բժշկական ապրանքներ, սարքեր և սարքավորումներ	2,985,898.2
		01	Դեղագործական ապրանքներ	2,985,898.2
	02		Արտահիվանդանոցային ծառայություններ	27,061,617.2
		01	Ընդհանուր բնույթի բժշկական ծառայություններ	9,802,775.6
		02	Մասնագիտացված բժշկական ծառայություններ	7,264,222.4
		03	Ստոմատոլոգիական ծառայություններ	842,992.9
		04	Պարաբժշկական ծառայություններ	9,151,626.3
	03		Հիվանդանոցային ծառայություններ	34,103,956.6
		01	Ընդհանուր բնույթի հիվանդանոցային ծառայություններ	12,320,814.3
		02	Մասնագիտացված հիվանդանոցային ծառայություններ	7,515,101.6
		03	Մոր և մանկան բժշկական ծառայություններ	14,268,040.7
	04		Հանրային առողջապահական ծառայություններ	3,983,195.8
		01	Հանրային առողջապահական ծառայություններ	3,983,195.8
	06		Առողջապահություն (այլ դասերին չպատկանող)	12,594,093.7
		01	Առողջապահական հարակից ծառայություններ և ծրագրեր	10,986,470.2
		02	Առողջապահության (այլ դասերին չպատկանող)	1,607,623.5
08			**ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ**	**21,027,053.6**
			այդ թվում՝	
	01		Հանգստի և սպորտի ծառայություններ	1,806,766.1

Բաժին	Խումբ	Դաս		Գումարը (հազար դրամներով)
		01	Հանգստի և սպորտի ծառայություններ	1,806,766.1
	02		Մշակութային ծառայություններ	11,711,512.3
		01	Գրադարաններ	1,513,064.6
		02	Թանգարաններ և ցուցասրահներ	2,054,925.1
		03	Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ	165,185.0
		04	Այլ մշակութային կազմակերպություններ	759,349.2
		05	Արվեստ	6,171,820.0
		06	Կինեմատոգրաֆիա	647,814.8
		07	Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնում և պահպանում	399,353.6
	03		Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծառայություններ	5,997,564.7
		01	Հեռուստառադիոհաղորդումներ	4,574,964.3
		02	Հրատարակչություններ, խմբագրություններ	1,048,260.7
		03	Տեղեկատվության ձեռքբերում	374,339.7
	04		Կրոնական և հասարակական այլ ծառայություններ	809,135.3
		01	Երիտասարդական ծրագրեր	613,442.2
		02	Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ	195,693.1
	06		Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասերին չպատկանող)	702,075.2
		01	Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասերին չպատկանող)	702,075.2
09			**ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**	**128,027,645.5**
			այդ թվում՝	
	01		Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն	26,523,679.3
		01	Նախադպրոցական կրթություն	494,638.1
		02	Տարրական ընդհանուր կրթություն	26,029,041.2
	02		Միջնակարգ ընդհանուր կրթություն	51,503,693.5
		01	Հիմնական ընդհանուր կրթություն	32,768,372.9
		02	Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն	18,735,320.6
	03		Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն	8,697,830.0
		01	Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն	2,854,281.3
		02	Միջին մասնագիտական կրթություն	5,843,548.7
	04		Բարձրագույն կրթություն	9,795,346.2
		01	Բարձրագույն մասնագիտական կրթություն	8,973,745.4
		02	Հետբուհական մասնագիտական կրթություն	821,600.8

Բաժին	Խումբ	Դաս		Գումարը (հազար դրամներով)
	05		Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն	4,863,129.0
		01	Արտադպրոցական դաստիարակություն	3,662,579.1
		02	Լրացուցիչ կրթություն	1,200,549.9
	06		Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	25,888,878.1
		01	Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	25,888,878.1
	08		Կրթություն (այլ դասերին չպատկանող)	755,089.4
		01	Կրթություն (այլ դասերին չպատկանող)	755,089.4
10			**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**	**362,033,007.1**
			այդ թվում՝	
	01		Վատառողջություն և անաշխատունակություն	1,271,230.1
		01	Վատառողջություն	208,603.4
		02	Անաշխատունակություն	1,062,626.7
	02		Ծերություն	254,675,669.4
		01	Ծերություն	254,675,669.4
	03		Հարազատին կորցրած անձինք	5,069,400.0
		01	Հարազատին կորցրած անձինք	5,069,400.0
	04		Ընտանիքի անդամներ և զավակներ	57,476,042.2
		01	Ընտանիքի անդամներ և զավակներ	57,476,042.2
	05		Գործազրկություն	2,364,498.2
		01	Գործազրկություն	2,364,498.2
	06		Բնակարանային ապահովում	500,000.0
		01	Բնակարանային ապահովում	500,000.0
	07		Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	11,222,135.8
		01	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	11,222,135.8
	09		Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	29,454,031.4
		01	Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	4,386,512.5
		02	Սոցիալական պաշտպանությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	25,067,518.9
11			**ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ**	**20,166,921.1**
			այդ թվում՝	
	01		ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ	20,166,921.1
		01	ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ	20,166,921.1

Հոդված 8. Հաստատել սույն օրենքի 7-րդ հոդվածով սահմանված բյուջետային հատկացումների հաշվին ֆինանսավորվող ծախսատեսակները, ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման, հետևյալ չափերով՝

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	**Գումարը (հազար դրամներով)**
1	**2**
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**1,246,437,412.0**
այդ թվում՝	
ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ	**1,093,726,456.9**
այդ թվում՝	
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ	**106,883,196.0**
այդ թվում՝	
Դրամով վճարվող աշխատավարձեր և հավելավճարներ	106,883,196.0
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ	**231,371,711.1**
այդ թվում՝	
Շարունակական ծախսեր	15,557,373.1
Գործուղումների և շրջագայությունների ծախսեր	4,376,425.7
Պայմանագրային այլ ծառայությունների ձեռքբերում	154,736,597.7
Այլ մասնագիտական ծառայությունների ձեռքբերում	1,488,792.6
Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և նյութեր)	10,815,075.5
Նյութեր	44,397,446.5
ՏՈԿՈՍԱՎՃԱՐՆԵՐ	**63,384,802.4**
այդ թվում՝	
- Ներքին տոկոսավճարներ	33,237,510.9
- Արտաքին տոկոսավճարներ	30,147,291.5
ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ	**24,978,070.2**
այդ թվում՝	
Սուբսիդիաներ պետական կազմակերպություններին	23,235,013.8
Սուբսիդիաներ ոչ պետական կազմակերպություններին	1,743,056.4

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Գումարը (հազար դրամներով)
ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	**114,773,971.7**
այդ թվում՝	
Դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններին	1,990,459.0
այդ թվում՝	
- Ընթացիկ դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններին	1,990,459.0
Ընթացիկ դրամաշնորհներ պետական հատվածի այլ մակարդակներին	111,643,405.4
որից՝	
- Ընթացիկ դրամաշնորհներ պետական կառավարման հատվածին	705,627.7
- Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին	7,897,531.6
- Պետական բյուջեից համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներ	38,957,722.3
- Օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների կորուստների փոխհատուցում	54,120.0
- Այլ ընթացիկ դրամաշնորհներ համայնքներին	2,000,000.0
- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին	22,313,012.2
- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին	5,061,230.1
- Այլ ընթացիկ դրամաշնորհներ	34,654,161.5
Կապիտալ դրամաշնորհներ պետական հատվածի այլ մակարդակներին	1,140,107.3
որից՝	
- Կապիտալ սուբվենցիաներ համանքներին	186,076.1
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ	**364,361,632.5**
այդ թվում՝	
Սոցիալական ապահովության նպաստներ	293,800.0

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Գումարը (հազար դրամներով)
Սոցիալական օգնության դրամական արտահայտությամբ նպաստներ (բյուջեից)	122,398,665.4
այդ թվում՝	
- Հիվանդության և հաշմանդամության նպաստներ բյուջեից	3,749,152.0
- Մայրության նպաստներ բյուջեից	7,101,712.0
- Երեխաների կամ ընտանեկան նպաստներ բյուջեից	45,834,331.2
- Գործազրկության նպաստներ բյուջեից	709,560.0
- Կենսաթոշակի անցնելու հետ կապված և տարիքային նպաստներ բյուջեից	157,589.5
- Հուղարկավորության նպաստներ բյուջեից	5,284,600.0
- Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից	2,524,178.6
- Այլ նպաստներ բյուջեից	57,037,542.1
Կենսաթոշակներ	241,669,167.1
այդ թվում՝	
Կենսաթոշակներ	241,669,167.1
ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	**187,973,073.0**
այդ թվում՝	
Նվիրատվություններ ոչ կառավարչական (հասարակական) կազմակերպություններին	2,297,505.8
Հարկեր, պարտադիր վճարներ և տույժեր, որոնք կառավարման տարբեր մակարդակների կողմից կիրառվում են միմյանց նկատմամբ	189,539.7
Դատարանների կողմից նշանակված տույժեր և տուգանքներ	10,086.4
Այլ ծախսեր	165,304,020.0
Պահուստային միջոցներ	20,171,921.1
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԵՏ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**152,710,955.1**
այդ թվում՝	
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ	**152,728,231.1**
այդ թվում՝	
ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	**152,728,231.1**

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Գումարը (հազար դրամներով)
այդ թվում՝	
ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**126,472,786.4**
այդ թվում՝	
- Շենքերի և շինությունների ձեռքբերում	75,570.2
- Շենքերի և շինությունների շինարարություն	86,435,745.8
- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	39,961,470.4
ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ, ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՎ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ	**24,389,346.9**
այդ թվում՝	
- Տրանսպորտային սարքավորումներ	1,216,220.0
- Վարչական սարքավորումներ	3,029,778.5
- Այլ մեքենաներ և սարքավորումներ	20,143,348.4
ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	**1,866,097.8**
այդ թվում՝	
- Ոչ նյութական հիմնական միջոցներ	179,087.0
- Գեոդեզիական-քարտեզագրական ծախսեր	453,862.4
- Նախագծահետազոտական ծախսեր	1,233,148.4
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՕՏԱՐՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	**(17,276.0)**

Հոդված 9. Սահմանել, որ՝

1) 2015 թվականի հունվար ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը (այսուհետ նաև՝ կառավարություն) չի շարունակի 2014 թվականի բյուջետային տարվա պարտավորությունների գծով գործառնությունների ձևակերպումների իրականացումը.

2) 2014 թվականի ընթացքում առևտրային կազմակերպություններում պետական բաժնեմասի մասնավորեցումից (սեփականաշնորհումից) Հայաստանի Հանրապետության դրամով ստացվող միջոցները մուտքագրվում են գանձապետական միասնական հաշվի սեփականաշնորհման հատուկ ենթահաշվում, իսկ արտարժույթով ստացվող միջոցները փոխարկվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում և մուտքագրվում գանձապետական միասնական հաշվի սեփականաշնորհման հատուկ ենթահաշվում.

3) Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը սույն օրենքով նախատեսված բյուջետային վարկը տրամադրվում է մինչև 2015 թվականի հունվարի 1-ը մարման ժամկետով՝ տարեկան 0.01 տոկոս տոկոսադրույքով.

4) 2014 թվականի հունվարի 1-ից հունիսի 30-ը ընկած ժամանակահատվածի համար՝

ա. քաղաքացիական ծառայողների բազային պաշտոնային դրույքաչափը կազմում է 40,000.0 դրամ, հարկային և մաքսային ծառայողների բազային պաշտոնային դրույքաչափը՝ 55,500.0 դրամ, քրեակատարողական ծառայողի պաշտոնային դրույքաչափը՝ 14,400.0 դրամ,

բ. Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության դատարանի դատավորի պաշտոնային դրույքաչափը կազմում է 478,405.0 դրամ, իսկ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի պաշտոնային դրույքաչափը՝ 428,070.0 դրամ.

5) 2014 թվականի հուլիսի 1-ից դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար պետական պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափը կազմում է 66,140.0 դրամ.

6) յուրաքանչյուր պետական մարմնի քաղաքացիական ծառայողների տարեկան պարգևատրման ֆոնդի միասնական տոկոսային դրույքաչափը կազմում է այդ մարմնի գծով Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեով նախատեսված քաղաքացիական ծառայողների աշխատավարձի տարեկան ֆոնդի 10 տոկոսը.

7) 2014 թվականի հունվարի 1-ից հունիսի 30-ը ընկած ժամանակահատվածում (բացառությամբ հարկային և մաքսային ծառայողների) և 2014 թվականի հուլիսի 1-ից դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում քաղաքացիական, հարկային, մաքսային, դատական ծառայողների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության խորհրդի, Հայաստանի Հանրապետության դատախազության, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմերում պետական ծառայողների տարեկան պարգևատրման ֆոնդի միասնական տոկոսային դրույքաչափերը յուրաքանչյուր մարմնի համար կազմում են տվյալ մարմնի գծով Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեով նախատեսված պետական ծառայողների աշխատավարձի տարեկան ֆոնդի 5-ական տոկոսը.

8) համայնքների բյուջեներին «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածով և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածով եկամտային հարկից և շահութահարկից նախատեսված մասհանումները 2014 թվականի բյուջետային տարում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից չեն կատարվում, իսկ բնապահպանական վճարներից մասհանումները կատարվում են «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով.

9) քաղաքացիաիրավական հարաբերություններից ծագած պարտքի դիմաց պետական կառավարչական հիմնարկի ձեռք բերած գույքի իրացումից եկամուտները հաշվեգրվում են այն հաշիվներին, որտեղ պետք է հաշվեգրվեր տվյալ պարտքի գումարը.

10) «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված դեպքում կառավարության ընդունած որոշումը չի կարող վերաբերել սույն օրենքով նախատեսված ելքերի (բացառությամբ դրանց գծով, ըստ կառավարության կանխատեսումների, 2014 թվականին սպասվող տնտեսման գումարների) հետևյալ ուղղություններին՝

ա. պետական ներքին և արտաքին պարտքի մարում և սպասարկում,

բ. սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ,

գ. պետական բյուջետային հիմնարկների աշխատակիցների աշխատանքի վարձատրություն (դրամական բավարարում) և դրան հավասարեցված վճարներ,

դ. պետական բյուջեից տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների գծով հատկացումներ,

ե. միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության կողմից տվյալ տարվա համար ստանձնած պարտավորություններ (բացառությամբ պետական պարտքի մարման և սպասարկման), որոնց չկատարումը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության նկատմամբ այդ պայմանագրերով նման դեպքերի համար նախատեսված էական ֆինանսական և այլ պահանջների առաջացմանը.

11) պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների (այսուհետ սույն կետում՝ մատակարարի) կանոնադրական կապիտալում պետական մասնակցության նվազեցման ճանապարհով ակտիվների կազմից կառավարության որոշումների հիման վրա գույքն առանձնացնելիս, գույքն ստացող պետական կառավարչական հիմնարկը պարտավոր է տվյալ մատակարարին վճարել նշված գործարքի շրջանակում վերջինիս ներկայացրած հարկային հաշվում առանձնացված ավելացված արժեքի հարկի գումարը՝ մատակարարի անունից այն վճարելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի համապատասխան եկամտային հաշվին՝ որպես մատակարարի պարտավորության կատարում ավելացված արժեքի հարկի գծով.

12) պետական հիմնարկների համար «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1.2-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի «ա» ենթակետում նշված նպատակով բացված արտաբյուջետային հաշիվներից ֆինանսավորվող ծախսային (ելքային) ծրագրերի գծով կառավարության հաստատած 2014 թվականի տարեկան նախահաշիվներով (սույն կետում այսուհետ՝ նախահաշիվներ) նախատեսվող ծախսերի (ելքերի) ֆինանսավորման նպատակով ստացվելիք 2014 թվականի բյուջետային տարվա եկամուտների գումարների

չափով ենթակա են ավելացման սույն օրենքի 2-րդ և 6-րդ հոդվածներով հաստատված բյուջետային եկամուտների գումարները, ծախսերի նախահաշվային գումարների չափով՝ սույն օրենքի 2-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներով հաստատված բյուջետային ծախսերի համապատասխան գումարները (նախահաշիվներին համապատասխան ֆինանսավորվող ծրագրերը և դրանց գծով նախատեսվող ծախսերը որպես առանձին լրացուցիչ ծրագրեր արտացոլելով սույն օրենքի N 1 հավելվածի՝ այդ ծրագրերին համապատասխանող բաժիններում), իսկ եկամուտների և ծախսերի նախահաշվային գումարների դրական կամ բացասական տարբերության չափով՝ համապատասխանաբար պակասեցման կամ ավելացման սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված դեֆիցիտի (պակասուրդի) ընդհանուր գումարը և սույն օրենքի 3-րդ հոդվածով և N 4 հավելվածով սահմանված պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման զուտ աղբյուրների և դրանց տարրերի (մուտքային և/կամ ելքային) համապատասխան գումարները (անհրաժեշտության դեպքում լրացում կատարելով այդ տարրերի կազմում): Նախահաշիվներով նախատեսվող ծախսերի (ելքերի) ֆինանսավորումը 2014 թվականին կարող է իրականացվել ինչպես արտաբյուջետային հաշիվներին 2014 թվականին ստացվող գումարների, այնպես էլ մինչև 2014 թվականի հունվարի 1-ը այդ հաշիվներին ստացված մուտքերի՝ 2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ չօգտագործված գումարների հաշվին.

13) 2014 թվականին շարունակվում է «ՎՏԲ - Հայաստան բանկ» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների՝ նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրած դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրումը՝ «Հայաստանի Հանրապետության 2006 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 9-րդ կետով հաստատված ծրագրի շրջանակներում հաշվառված անձանց մասով՝ այդ ծրագրին համապատասխան (հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ կետի պահանջը).

14) 2014 թվականին շարունակվում է սույն օրենքի N 1 հավելվածի բյուջետային ծախսերի գործառական դասակարգման N 10 բաժնի N 07 խմբի N 01 դասի «06. «ՎՏԲ - Հայաստան բանկ» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում» ծրագրով նախատեսված հատկացումների հաշվին նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման արտահերթ տրամադրումը Հայրենական մեծ պատերազմի վետերաններին՝ «Հայաստանի Հանրապետության 2006 թվականի պետական բյու-

ջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 8 հավելվածի 4-րդ կետով սահմանված սանդղակին համապատասխան՝ կառավարության սահմանած կարգով.

15) սույն օրենքի N 1 հավելվածի բյուջետային ծախսերի գործառական դասակարգման N 10 բաժնի N 07 խմբի N 01 դասի «06. «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում» ծրագրով նախատեսված հատկացումների հաշվին նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցումը տրամադրվում է «Հայաստանի Հանրապետության 2006 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 8 հավելվածի 4-րդ կետով սահմանված սանդղակին համապատասխան՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված «0»-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքների՝ մինչև 1929 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ծնված, անդամներին (այսուհետ՝ սոցիալապես անապահով անձ) և Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակից անձանց՝ կառավարության սահմանած կարգով.

16) կառավարությունը մինչև 2014 թվականի մարտի 1-ը սահմանում է «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրման կարգը, դրանում ներառելով սոցիալապես անապահով անձանց և Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գորոծողությունների մասնակից անձանց ավանդի դիմաց փոխհատուցման համար ֆինանսական միջոցների մասնաբաժինները և 2006-2013 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում ստացած ավանդատուների ավանդային գրքույկներում առկա գումարի (ռուբլով), որի նկատմամբ հաշվարկվել է փոխհատուցման գումարը, մարված համարելու մեխանիզմը.

17) 2006-2013 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում ստացած ավանդատուների ավանդային գրքույկներում առկա գումարը (ռուբլով), որի նկատմամբ հաշվարկվել է փոխհատուցման գումարը, համարվում է մարված.

18) «ՎՏԲ - Հայաստան բանկ» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների կողմից նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու հանգամանքը չի կարող հիմք հանդիսանալ այդ փոխհատուցումն ստացած անձանց ընտանեկան նպաստներ և միանվագ դրամական օգնություն ստացողների ցուցակներից հանելու համար.

19) սույն օրենքի N 1 հավելվածի բյուջետային ծախսերի գործառական դասակարգման N 10 բաժնի N 04 խմբի N 01 դասի «Երեխայի ծննդյան միանվագ նպաստ» ծրագրով նախատեսված հատկացումների հաշվին իրականացվում է երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան համար ընտանիքներին պետական աջակցության տրամադրման ծրագիրը, որը՝ որպես ամենամյա ծրագիր, հաստատում է կառավարությունը:

Հոդված 10. Հաստատել՝

1) սույն օրենքի 7-րդ հոդվածով սահմանված բյուջետային հատկացումների բաշխումը՝ ըստ Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների՝ սույն օրենքի N 1 հավելվածի համաձայն.

2) Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեից համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման դոտացիաների ձևով տրամադրվող հատկացումների՝ ըստ «Ֆինանսական համահարթեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված «ա» և «բ» գործոնների, 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող, ինչպես նաև նույն օրենքի 6-րդ հոդվածի 7-րդ մասում նշված համայնքների բյուջեների միջև նույն օրենքով սահմանված կարգով բաշխման ենթակա հետևյալ ընդհանուր գումարները՝

ա. «ա» գործոնով և 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող, ինչպես նաև «Ֆինանսական համահարթեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 7-րդ մասում նշված համայնքների բյուջեներին տրամադրվող ընդհանուր գումարը՝ 26,991,383.6 հազար դրամ, որից՝

- «ա» գործոնով տրամադրվող ընդհանուր գումարը՝ 26,275,225.3 հազար դրամ,

- 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքների բյուջեներին տրամադրվող ընդհանուր գումարը՝ 696,500.0 հազար դրամ (յուրաքանչյուր համայնքին տրամադրվող տարեկան գումարը՝ 3,500.0 հազար դրամ),

- «Ֆինանսական համահարթեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 7-րդ մասում նշված համայնքների բյուջեներին տրամադրվող ընդհանուր գումարը՝ 19,658.3 հազար դրամ,

բ. «բ» գործոնով տրամադրվող ընդհանուր գումարը՝ 11,966,338.7 հազար դրամ.

3) համայնքների բյուջեներին օրենքով սահանված կարգով ֆինանսական համահարթեցման դոտացիաներ և Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքնե-

րի 2012 թվականի բյուջեներում եկամուտների կորուստների փոխհատուցման նպատակով գումարներ տրամադրելու համար սույն օրենքի N 1 հավելվածով նախատեսված հատկացումների ընդհանուր գումարի բաշխումը՝ ըստ առանձին համայնքների՝ սույն օրենքի N 2 հավելվածի համաձայն.

4) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համակարգի 2014 թվականի ծախսերի նախահաշիվը՝ 4,139,647.0 հազար դրամ գումարով՝ սույն օրենքի N 3 հավելվածի համաձայն.

5) սույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները՝ ըստ առանձին տարրերի՝ սույն օրենքի N 4 հավելվածի համաձայն.

6) «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ բնապահպանական ծրագրերի իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեից սուբվենցիաներ ստացող համայնքների ցանկը և այդ սուբվենցիաները տրամադրելու համար նախատեսված հատկացումների գումարները՝ սույն օրենքի N 5 հավելվածի համաձայն.

7) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2014 թվականի վարչական ծախսերի նախահաշիվը՝ 6,350,462.9 հազար դրամ գումարով՝ սույն օրենքի N 6 հավելվածի համաձայն, և կապիտալ ներդրումների առավելագույն սահմանաքանակը՝ 28,052,764.8 հազար դրամ.

8) ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման (գործողության ժամկետի երկարաձգման) պարտադիր վճարների և ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների չափերը՝ սույն օրենքի N 7 հավելվածի համաձայն:

Հոդված 11. Թույլատրել կառավարությանը 2014 թվականին անհրաժեշտության դեպքում՝

1) վերաբաշխել սույն օրենքի N 1 հավելվածում բյուջետային ծախսերի գործառական դասակարգման նույն բաժնի նույն խմբի նույն դասին պատկանող նույն ծախսային ծրագիրն իրականացնող Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների միջև՝ նրանց գծով տվյալ ծրագիրն իրականացնելու համար սույն օրենքով հաստատված հատկացումները.

2) փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարել բյուջետային ծախսերի գործառական դասակարգման նույն բաժնի նույն խմբի նույն դասին պատկանող՝ սույն օրենքի N 1 հավելվածով սահմանված նույն ծախսային ծրագիրն իրականացնող Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության համապատասխան մարմինների ցանկերում.

3) սույն կետով սահմանված դեպքերում կատարված ծախսերը և ստացված եկամուտներն արտահայտելով Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվություններում և այդ գումարների չափով ավելացնելով սույն օրենքի 2-րդ և 6-8-րդ

հոդվածներով հաստատված բյուջետային եկամուտների և ծախսերի (դրանք արտացոլելով նաև սույն օրենքի N 1 հավելվածի համապատասխան բաժիններում որպես առանձին լրացուցիչ ծախսային ծրագրեր) գումարները, Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեից առանց սահմանափակման իրականացնել՝

ա. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների կողմից դատարան հայցադիմումներ, դիմումներ ու գանգատներ, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս, ինչպես նաև դատարանի կողմից տրամադրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված վճարումները, ինչպես նաև դատական ակտերի հիման վրա հօգուտ պետական բյուջեի պետական հիմնարկներից բռնագանձված պետական տուրքի գումարների վճարումները,

բ. Հայաստանի Հանրապետության հարկային կամ մաքսային մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններում և պետական հիմնարկներում օրենսդրությամբ սահմանված կարգով կատարված ստուգումների և վերստուգումների արդյունքում հարկերի և այլ պարտադիր վճարների գծով առաջադրված լրացուցիչ պարտավորությունների մարման համար անհրաժեշտ վճարումները,

գ. «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան ոչ կառավարչական բնույթի գործունեություն իրականացնող պետական (բյուջետային) հիմնարկների պետական ոչ առևտրային կազմակերպությունների վերակազմակերպման նպատակով՝ Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների պետական ռեգիստրում պետական գրանցման, կնիքների պատրաստման թույլտվության, ինչպես նաև կազմակերպությանը սեփականության կամ օգտագործման իրավունքով հանձնված գույքի նկատմամբ իրավունքների գրանցում կատարելու համար «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված վճարումները,

դ. պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների (այսուհետ սույն ենթակետում՝ մատակարարի) կանոնադրական կապիտալում պետական մասնակցության նվազեցման ճանապարհով ակտիվների կազմից գույք առանձնացնելիս՝ գույքն ստացող պետական կառավարչական հիմնարկի կողմից նշված գործարքի շրջանակում տվյալ մատակարարին վճարման ենթակա ավելացված արժեքի հարկի պարտավորության կատարման գծով ծախսերը,

ե. սոցիալական ապահովության մարմիններից արտոնյալ պայմաններով ավտոմեքենաներ ստացած հաշմանդամներին վարորդական իրավունքի վկայական և ավտոմեքենայի պետական համարանիշ տալու, ինչպես նաև ավտոմեքենայի գրանցման ու վերագրանցման համար «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված վճարումների գծով

այդ հաշմանդամների փոխարեն, նշված օրենքի 31-րդ հոդվածի պահանջների համաձայն, կառավարության կողմից կատարվող ծախսերը.

4) պետական սեփականություն համարվող գույքը հիմնադրամներին վարձակալության հանձնելիս՝ հաշվարկված վարձակալական վճարները, կառավարության սահմանած դեպքերում, թողնել հիմնադրամների տնօրինությանը՝ որպես Հայաստանի Հանրապետության կողմից հիմնադրամներում կատարվող կամավոր գույքային վճար՝ առանց սահմանափակման, այդ գումարներն արտահայտելով Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունների ծախսային մասում՝ որպես պետական բյուջեից (կառավարության պահուստային ֆոնդից) հիմնադրամներին կատարված հատկացումներ, իսկ եկամուտներում՝ որպես այդ հիմնադրամների կողմից նույն գումարների չափով պետական բյուջե մուծված վարձակալական վճարների ստացում (եթե նշված վարձակալական վճարները նախատեսված չեն Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի եկամուտների կազմում, ապա այդ գումարների չափով ավելացնել սույն օրենքի 2-րդ և 6-8-րդ հոդվածներով հաստատված բյուջետային եկամուտների և ծախսերի գումարները, այդ թվում նաև՝ կառավարության պահուստային ֆոնդը).

5) բյուջետային տարվա առանձին ժամանակահատվածներում պետական բյուջեում՝ սույն օրենքի համաձայն բյուջետային ելքերի ֆինանսավորման համար միջոցների անբավարարության առաջացման դեպքում ժամանակավորապես, մինչև 2014 թվականի դեկտեմբերի 25-ը վերականգնելու պայմանով, ներգրավել առևտրային կազմակերպություններում պետական բաժնեմասի մասնավորեցումից (սեփականաշնորհումից) ստացված միջոցների կուտակման նպատակով բացված գանձապետական միասնական հաշվի սեփականաշնորհման հատուկ ենթահաշվում միջոցների առկա մնացորդի՝ սույն օրենքով նախատեսված բյուջետային ելքերի ֆինանսավորմանը չուղղված գումարը, ներկայացնելով այդ ենթահաշվի շարժը Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվություններում (առանձին հավելվածով).

6) սույն օրենքի 6-րդ հոդվածով բյուջետային եկամուտների՝ ըստ դրանց ձևավորման («Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասում նշված) առանձին աղբյուրների գծով սահմանված համապատասխան գումարները պետական բյուջեի կատարման ընթացքում գերազանցած՝ լրացուցիչ ստացված եկամուտների գումարի չափով ավելացնել սույն օրենքի 2-րդ և 6-րդ հոդվածներով հաստատված բյուջետային եկամուտների գումարները, ինչպես նաև ըստ այդ եկամուտների հաշվին կատարվելիք բյուջետային ելքերի պատկանելիության համապատասխան փոփոխության ենթարկել բյուջետային ծախսերի ֆինանսավորման համար սույն օրենքի 2-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներով հաստատված բյուջետային հատկացումների գումարները և N 1 հավելվածով նախատեսված կամ նույն հավելվածում լրացվող որևէ ծախսային ծրագրի գծով սահմանված հատկացումները, և (կամ) սույն

օրենքի 2-րդ հոդվածով հաստատված դեֆիցիտի (պակասուրդի), սույն օրենքի 3-րդ հոդվածով և N 4 հավելվածով սահմանված դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման զուտ աղբյուրների և դրանց տարրերի համապատասխան գումարները (անհրաժեշտության դեպքում լրացում կատարելով այդ տարրերի կազմում), դրանց օգտագործումն իրականացնելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան: Սույն կետի գործողությունը չի տարածվում սույն հոդվածի 3-րդ և 11-րդ կետերով, ինչպես նաև սույն օրենքի 9-րդ հոդվածի 12-րդ կետով նախատեսված դեպքերի վրա.

7) բյուջետային տարվա արդյունքներով՝ գերազանցել սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) գումարը՝ ներքին և արտաքին աղբյուրներից բյուջետային վարկերի վերադարձից ստացված՝ սույն օրենքի N 4 հավելվածով այդ մուտքի գծով նախատեսված մակարդակը գերազանցած գումարից ոչ ավելի չափով (նույն չափով ավելացնելով N 4 հավելվածով նախատեսված բյուջետային վարկերի վերադարձից գումարը), և ըստ այդ գումարի հաշվին կատարվելիք ելքերի պատկանելիության համապատասխան փոփոխության ենթարկել սույն օրենքի 2-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներով հաստատված ծախսերի և դեֆիցիտի (պակասուրդի) ընդհանուր գումարները, 3-րդ հոդվածով և սույն օրենքի N 4 հավելվածով սահմանված պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման զուտ աղբյուրների և դրանց տարրերի համապատասխան գումարները (անհրաժեշտության դեպքում լրացում կատարելով այդ տարրերի կազմում), ինչպես նաև N 1 հավելվածով նախատեսված կամ նույն հավելվածում լրացվող որևէ ծախսային ծրագրի գծով սահմանված հատկացումները, և դրանց օգտագործումն իրականացնել «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան.

8) բյուջետային տարվա արդյունքներով՝ գերազանցել սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) գումարը՝ ներքին և արտաքին աղբյուրներից ստացված փոխառությունների՝ սույն օրենքի N 4 հավելվածով նախատեսված մարումների գծով առաջացող (այդ թվում նաև՝ փոխատուի համաձայնությամբ մարումը չկատարելու դեպքում առաջացող) տնտեսումների գումարից ոչ ավելի չափով (այդ գումարի չափով նվազեցնելով N 4 հավելվածով նախատեսված փոխառությունների մարումների գումարը) և ըստ այդ տնտեսված գումարի հաշվին կատարվելիք ելքերի պատկանելիության համապատասխան փոփոխության ենթարկել սույն օրենքի 2-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներով հաստատված ծախսերի և դեֆիցիտի (պակասուրդի) ընդհանուր գումարները, 3-րդ հոդվածով և N 4 հավելվածով սահմանված պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման զուտ աղբյուրների և դրանց տարրերի համապատասխան գումարները (անհրաժեշտության դեպքում լրացում կատարելով այդ տարրերի կազմում), ինչպես նաև N 1 հավելվածով նախատեսված կամ նույն հավել-

վածում լրացվող որևէ ծախսային ծրագրի գծով սահմանված հատկացումները, և դրանց օգտագործումն իրականացնել «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան.

9) վերաբաշխել սույն օրենքի N 3 հավելվածով սահմանված Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2014 թվականի ծախսերը (ըստ ծախսային հոդվածների) այն պայմանով, որ թույլ չտրվի կոմիտեի՝ սույն օրենքի N 1 հավելվածում սահմանված ծախսային ծրագրերի գծով նախատեսված հատկացումների ծավալների փոփոխություն և սույն օրենքի N 3 հավելվածով սահմանված յուրաքանչյուր ծախսային հոդվածի գծով նախատեսված ծախսերի ընդհանուր գումարի կրճատում՝ 15 տոկոսի, կամ ավելացում՝ 30 տոկոսի չափով.

10) «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածին և սույն հոդվածին համապատասխան թույլատրվող վերաբաշխումներով և փոփոխություններով պայմանավորված փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարել սույն օրենքի NN 2, 3 և 5 հավելվածներում, ինչպես նաև NN 1 և 4 հավելվածների համապատասխան աղյուսակներում.

11) սույն օրենքի 6-րդ հոդվածով հաստատված եկամուտների կազմում չնախատեսված և պետական բյուջե մուտքագրված նվիրաբերված գումարները՝ ըստ նվիրաբերողի կողմից որոշված ուղղությունների, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն օգտագործելու դեպքում այդ գումարների չափով ավելացնել սույն օրենքի 2-րդ և 6-րդ հոդվածներով հաստատված բյուջետային եկամուտների գումարը և ըստ այդ եկամուտների հաշվին կատարվելիք բյուջետային ելքերի պատկանելիության փոփոխության ենթարկել սույն օրենքի 2-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներով հաստատված բյուջետային ծախսերի համապատասխան գումարներն ու N 1 հավելվածով նախատեսված սույն կետում նշված եկամուտների հաշվին ֆինանսավորվող համապատասխան ծախսային ծրագրերի գծով սահմանված հատկացումները և (կամ) սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված դեֆիցիտի (պակասուրդի) և սույն օրենքի 3-րդ հոդվածով, ինչպես նաև սույն օրենքի N 4 հավելվածով հաստատված դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման զուտ աղբյուրների և դրանց տարրերի համապատասխան գումարները (եթե սույն կետում նշված եկամուտների հաշվին ֆինանսավորվող ծրագրերը նախատեսված չեն սույն օրենքի N 1 և (կամ) N 4 հավելվածներում, ապա դրանք որպես առանձին լրացուցիչ ծրագրեր ըստ պատկանելիության արտացոլել նշված հավելվածների՝ այդ ծրագրերին համապատասխանող բաժիններում).

12) պահպանելով սույն օրենքի N 1 հավելվածում ներկայացված յուրաքանչյուր ծախսային ծրագրի գծով սահմանված հատկացումների ընդհանուր գումարը՝ փոփոխել վերջինիս բաշխումն ըստ

բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգմամբ սահմանված հոդվածների (առանց վերաբաշխվող գումարների սահմանափակման).

13) բյուջետային ելքերի ֆինանսավորման համար 2014 թվականի բյուջետային տարվա ընթացքում պետական բյուջեում միջոցների անբավարարության առաջացման դեպքում դրանց ֆինանսավորմանն ուղղել առևտրային կազմակերպություններում պետական բաժնեմասի մասնավորեցումից (սեփականաշնորհումից) և պետական արժեթղթերի իրացումից ստացված միջոցների՝ սույն օրենքով նախատեսված բյուջետային ելքերի ֆինանսավորման համար չնախատեսված գումարները, ինչպես նաև սույն օրենքի 3-րդ հոդվածով հաստատված պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրների կազմում չնախատեսված, սակայն 2014 թվականի բյուջետային տարվա ընթացքում փաստացի ստացված վարկային գումարները.

14) կառավարության կնքած՝ օրենքով սահմանված կարգով վավերացված կամ հաստատված միջազգային պայմանագրերին համապատասխան օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ Հայաստանի Հանրապետությունում իրականացվող վարկային և դրամաշնորհային նպատակային ծախսային ծրագրերի (սույն կետում այսուհետ՝ նպատակային ծրագրեր) կատարման ընթացքին նպաստելու նպատակով՝

ա. սույն օրենքի N 1 և N 4 հավելվածներով նախատեսված վարկային նպատակային ծրագրերը ֆինանսավորելիս (նշված ծախսերի ֆինանսավորման համապատասխան վարկային աղբյուրների առկայությամբ), չգործադրելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված բյուջետային հատկացումների վերաբաշխման մեխանիզմը և 19-րդ հոդվածի դրույթները, գերազանցել սույն օրենքի N 1 հավելվածի N 14 աղյուսակով և N 4 հավելվածով սահմանված՝ արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկերի հաշվին իրականացվող առանձին նպատակային ծրագրերի գծով սահմանված հատկացումների գումարները, սույն օրենքի N 1 հավելվածի N 14 աղյուսակով և N 4 հավելվածով նախատեսված ծրագրերի գծով սահմանված հատկացումների ընդհանուր գումարը, ինչպես նաև սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված պետական բյուջեի ծախսերի և դեֆիցիտի (պակասուրդի) և 3-րդ հոդվածով ու N 4 հավելվածով սահմանված պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման զուտ աղբյուրների և դրանց տարրերի համապատասխան գումարները,

բ. 2014 թվականի բյուջետային տարվա ընթացքում օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը հատկացված սույն օրենքով չնախատեսված նպատակային վարկային կամ դրամաշնորհային միջոցների (սույն ենթակետում այսուհետ՝ նպատակային միջոցների) հաշվին ֆինանսավորել սույն օրենքի N 1 և (կամ) N 4 հավելվածներով չնախատեսված նպատակային ծրագրերը: Այդ ծրագրերի գծով Հայաստանի Հանրապե-

տության 2014 թվականի պետական բյուջե ստացվող նպատակային միջոցների հաշվին նախատեսվող ելքերի գումարից ոչ ավելի չափով, ըստ անհրաժեշտության, ավելացնել սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված դեֆիցիտի (պակասուրդի) ընդհանուր գումարը (վարկային նպատակային ծրագրերի դեպքում) կամ եկամուտների գումարը (դրամաշնորհային նպատակային ծրագրերի դեպքում), ինչպես նաև, ըստ այդ գումարի բնույթի և վերջինիս հաշվին կատարվող ելքերի պատկանելիության, համապատասխան փոփոխության ենթարկել 3-րդ հոդվածով և N 4 հավելվածով սահմանված պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման զուտ աղբյուրների և դրանց առանձին տարրերի համապատասխան գումարները (անհրաժեշտության դեպքում լրացում կատարելով այդ տարրերի կազմում), 6-րդ հոդվածով հաստատված բյուջետային եկամուտների գումարները, ինչպես նաև 2-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներով հաստատված բյուջետային ծախսերի համապատասխան գումարները (սույն ենթակետում նշված՝ սույն օրենքով չնախատեսված նպատակային ծրագրերը որպես առանձին լրացուցիչ ծրագրեր ըստ պատկանելիության արտացոլելով սույն օրենքի N 1 և (կամ) N 4 հավելվածների՝ այդ ծրագրերին համապատասխանող բաժիններում),

գ. 2014 թվականի բյուջետային տարվա ընթացքում լրացուցիչ ֆինանսավորել սույն օրենքի N 1 և (կամ) N 4 հավելվածներով նախատեսված (ներառյալ սույն կետի «բ» ենթակետով սահմանված կարգով բյուջետային տարվա ընթացքում սույն օրենքի N 1 և (կամ) N 4 հավելվածներում արտացոլված) նպատակային ծրագրերը՝ դրանց գծով օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից մինչև 2014 թվականի հունվարի 1-ը ստացված՝ սույն օրենքով չնախատեսված միջոցների չօգտագործված մնացորդի հաշվին (այդ գումարի չափով ավելացնելով N 4 հավելվածով նախատեսված՝ ելքերի ֆինանսավորմանն ուղղվող պետական բյուջեի 2014 թվականի տարեսկզբի ազատ մնացորդի միջոցների գումարը), և, ըստ այդ միջոցների հաշվին կատարված ելքերի պատկանելիության, համապատասխան փոփոխության ենթարկել սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված դեֆիցիտի (պակասուրդի) ընդհանուր գումարը, 3-րդ հոդվածով և N 4 հավելվածով սահմանված պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման զուտ աղբյուրների և դրանց առանձին տարրերի համապատասխան գումարները (անհրաժեշտության դեպքում լրացում կատարելով այդ տարրերի կազմում), ինչպես նաև 2-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներով հաստատված բյուջետային ծախսերի (նաև N 1 հավելվածով նախատեսված համապատասխան ծախսային ծրագրերի) համապատասխան գումարները և դրանց օգտագործումն իրականացնել «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան,

դ. բյուջետային տարվա ընթացքում սույն օրենքի N 1 և (կամ) N 4 հավելվածներով նախատեսված (ներառյալ սույն կետի «բ» ենթակետով սահմանված կարգով բյուջետային տարվա ընթացքում սույն օրենքի N 1 և (կամ) N 4 հավելվածներում արտացոլված) առանձին նպատակային ծրագրերով

սույն օրենքով նախատեսված կառավարության համաֆինանսավորման հատկացումների գումարներն ավելացնելու կամ դրանք նախատեսելու անհրաժեշտության առաջացման դեպքում, եթե նշված ավելացումը կամ նախատեսումը հնարավոր չէ իրականացնել հատկացումների միջոցներ-ային վերաբաշխման եղանակով կամ կառավարության պահուստային ֆոնդի միջոցների հաշվին՝ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման լրացուցիչ, սույն օրենքով չնախատեսված գումարների հայթայթման (առկայության) դեպքում, բյուջետային տարվա արդյունքներով գերազանցել սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) գումարը՝ կառավարության համաֆինանսավորման համար անհրաժեշտ լրացուցիչ գումարից ոչ ավելի չափով (բայց դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման լրացուցիչ՝ սույն օրենքով չնախատեսված հայթայթված (առկա) գումարների սահմաններում) և ըստ այդ գումարի հաշվին կատարվելիք ելքերի պատկանելիության, համապատասխան փոփոխության ենթարկել սույն օրենքի 2-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներով հաստատված ծախսերի և դեֆիցիտի (պակասուրդի) ընդհանուր գումարները, 3-րդ հոդվածով և N 4 հավելվածով սահմանված պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման զուտ աղբյուրների և դրանց տարրերի համապատասխան գումարները (անհրաժեշտության դեպքում լրացում կատարելով այդ տարրերի կազմում), ինչպես նաև N 1 հավելվածով և (կամ) N 4 հավելվածով նախատեսված համապատասխան նպատակային ծրագրի գծով սահմանված հատկացումները, և դրանց օգտագործումն իրականացնել «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան,

ե. սույն օրենքի N 1 և N 4 հավելվածներով նախատեսված դրամաշնորհային նպատակային ծրագրերը ֆինանսավորելիս (նշված ծախսերի ֆինանսավորման համապատասխան դրամաշնորհային աղբյուրների առկայությամբ), չգործադրելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված բյուջետային հատկացումների վերաբաշխման մեխանիզմը և 19-րդ հոդվածի դրույթները, գերազանցել սույն օրենքի N 1 հավելվածի N 15 աղյուսակով և N 4 հավելվածով սահմանված՝ արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային դրամաշնորհների հաշվին իրականացվող առանձին նպատակային ծրագրերի գծով սահմանված հատկացումների գումարները, սույն օրենքի N 1 հավելվածի N 15 աղյուսակով և (կամ) N 4 հավելվածով նախատեսված ծրագրերի գծով սահմանված հատկացումների ընդհանուր գումարը, ինչպես նաև սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված պետական բյուջեի ծախսերի և դեֆիցիտի (պակասուրդի) և 3-րդ հոդվածով ու N 4 հավելվածով սահմանված պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման զուտ աղբյուրների և դրանց տարրերի համապատասխան գումարները.

15) «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված, սակայն այդ տարում չստացված և սույն օրենքի 6-րդ հոդվածով հաստատված եկամուտների կազմում չնախատեսված պաշտոնական դրամաշնորհների գումարները 2014 թվականին ստանալու դեպքում՝ այդ գումարներն առաջնահերթության կարգով ուղղել դրանց չստացման հետևանքով առաջացած բյուջետային պարտքերի մարմանը.

16) բյուջետային տարվա ընթացքում, չգերազանցելով պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի)՝ սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված գումարը, վերաբաշխել պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման առանձին աղբյուրների, ինչպես նաև վերջիններիս առանձին տարրերի միջև դրանց գծով սույն օրենքի 3-րդ հոդվածով և N 4 հավելվածով հաստատված գումարները, և (կամ) կատարել պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման զուտ աղբյուրների հանրագումարի ավելացմանը չհանգեցնող այլ հաշվեկշռված փոփոխություններ և (կամ) լրացումներ՝ դրանցից բխող համապատասխան փոփոխություններ կատարելով սույն օրենքի NN 2 և 3 հավելվածներում և N 1 և (կամ) N 4 հավելվածների համապատասխան աղյուսակներում.

17) ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ստացվող մուտքերի՝ սույն օրենքով սահմանված գումարը պետական բյուջեի կատարման ընթացքում գերազանցած՝ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից լրացուցիչ ստացված մուտքերի չափով ավելացնել սույն օրենքի N 1 հավելվածով համապատասխան մուտքային ծրագրի գծով ոչ ֆինանսական ակտիվների օտարումից նախատեսված մուտքերի գումարը, ինչպես նաև, ըստ այդ մուտքերի հաշվին կատարվելիք բյուջետային ելքերի պատկանելիության, համապատասխան փոփոխության ենթարկել՝ սույն օրենքի 2-րդ, 7-րդ, 8-րդ հոդվածներով հաստատված և N 1 հավելվածով նախատեսված «Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդ» ծախսային ծրագրի (և (կամ) նույն հավելվածով նախատեսված որևէ այլ ծախսային ծրագրի) գծով սահմանված հատկացումները, և (կամ) սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված դեֆիցիտի (պակասուրդի), սույն օրենքի 3-րդ հոդվածով, ինչպես նաև N 4 հավելվածով հաստատված դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման զուտ աղբյուրների և դրանց տարրերի համապատասխան գումարները (անհրաժեշտության դեպքում լրացում կատարելով այդ տարրերի կազմում): Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ստացվող մուտքերի՝ սույն օրենքով սահմանված գումարը պետական բյուջեի կատարման ընթացքում գերազանցած՝ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից լրացուցիչ ստացված մուտքերի օգտագործումն իրականացնել «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան.

18) սույն օրենքի N 1 հավելվածով նախատեսված որևէ ծախսային ծրագրի գծով սահմանված հատկացումների հաշվին բյուջետային վարկերի կամ փոխատվությունների տրամադրման կամ

մարման, արժեթղթերի (ներառյալ՝ բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության) գնման կամ մարման գծով գործառույթների իրականացման դեպքում նշված գումարների չափով նվազեցնել սույն օրենքի 2-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներով հաստատված ծախսերի և դեֆիցիտի (պակասուրդի) ընդհանուր գումարները և N 1 հավելվածով նախատեսված տվյալ ծախսային ծրագրի գծով սահմանված հատկացումների գումարը, ինչպես նաև դրանից բխող համապատասխան փոփոխություններ կատարել սույն օրենքի 3-րդ հոդվածով և փոփոխություններ և (կամ) լրացումներ՝ N 4 հավելվածով սահմանված պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման զուտ աղբյուրների և դրանց տարրերի համապատասխան գումարներում և կազմում.

19) բյուջետային տարվա ընթացքում, պահպանելով սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված բյուջետային եկամուտների ընդհանուր գումարը, բյուջետային եկամուտների ձևավորման («Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասում նշված) առանձին աղբյուրների դասակարգման խմբերի միջև կատարել դրանց գծով սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված համապատասխան գումարների վերաբաշխումներ՝ դրանից բխող համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելով սույն օրենքի NN 2, 3 հավելվածներում և N 1 ու N 4 հավելվածների համապատասխան աղյուսակներում:

Հոդված 12. Թույլատրել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին՝ անհրաժեշտության դեպքում վերաբաշխել սույն օրենքի N 6 հավելվածով սահմանված վարչական ծախսերը (ըստ ենթահոդվածների) այն պայմանով, որ թույլ չտրվի վարչական ծախսերի սույն օրենքի N 6 հավելվածով սահմանված յուրաքանչյուր հոդվածի գծով նախատեսված ծախսերի կրճատում՝ 15 տոկոսի կամ ավելացում՝ 30 տոկոսի չափով:

Հոդված 13. Սույն օրենքի NN 1-7 հավելվածները համարվում են սույն օրենքի անբաժանելի մասերը:

Հոդված 14. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության

Նախագահ **Ս. ՍԱՐԳՍՅԱՆ**